Հարկային տեղեկատվական համակարգ
www.taxinfo.am

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի N 525 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11 դեկտեմբերի 2014 թ.
N 1399-Ն

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի օգոստոսի 25-ի «Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանելու և այդ փաստաթղթերի կազմման կարգը հաստատելու մասին» N 525 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման նախաբանը «17-րդ հոդվածի 5-րդ մասին» բառերից հետո լրացնել «և «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասին» բառերով.

2) որոշման 1-ին կետով հաստատված կարգը 5.3-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.4-րդ կետով.

«5.4. «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների համար գործունեության այդ տեսակի շրջանակներում Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքների մասով ապրանքների ձեռքբերումը հիմնավորող՝ օտարերկրյա անձանց կողմից տրամադրված փաստաթղթերին ներկայացվող պահանջները համարվում են բավարարված նաև այն դեպքերում, երբ ապրանքների ձեռքբերման՝ մատակարարի կողմից հաստատված փաստաթղթերում արտացոլված են մատակարարի անվանումը, փաստաթղթի դուրսգրման ամսաթիվը, ինչպես նաև սույն կարգի 2-րդ կետի «դ» և «ե» ենթակետերով նախատեսված վավերապայմանները՝ անկախ այդ փաստաթղթերի՝ մաքսային մարմնի կողմից կնքված (հաստատված) լինելու հանգամանքից:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և կիրառվում է 2014 թվականի հոկտեմբերի 1-ից հետո Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքների ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ — Հ. Աբրահամյան

17 դեկտեմբեր 2014 թ.
Երևան